

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՄԱԿԱՆՈՒՄ

Վահե Լևոնի Թումանյանի Ը.00.02. – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հայաստանի «սթարթափ էկոհամակարգ»-ի զարգացումը՝ որպես տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում ներդրումների ներգրավման միջոց» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

«Սթարթափ» և «սթարթափ էկոհամակարգ» հասկացությունները համեմատաբար վերջերս շրջանառության մեջ մտած հասկացություններ են, որոնց վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները գնալով շատանում են ու դառնում պահանջված: Հատկապես Հայաստանում թեմային առնչվող գիտական հետազոտությունները գրեթե բացակայում են, քանի որ Հայաստանի սթարթափ էկոհամակարգը դեռևս երիտասարդ է, և այնտեղ գործող սթարթափների գերակշիռ մասը գտնվում է կայացման փուլում:

Տնտեսությունը կայուն զարգացնելու ու ստեղծվող արտադրանքների և ծառայությունների՝ համաշխարհային շուկայում մրցունակ դարձնելու գործում կարևոր դեր է խաղում նորարարության զարգացումը և կիրառումը: Նորարարությունը ձեռնարկություններին հնարավորություն է տալիս մեծացնել եկամուտների ծավալները, մրցակիցներից առաջ անցնել և մուտք գործել նոր շուկաներ, ինչն էլ իր հերթին բարձրացնում է պետության հեղինակությունը և մեծացնում պետական բյուջեի եկամուտները: Իսկ նորարարության զարգացման մեջ շատ կարևոր դեր են խաղում սթարթափները, որոնք ի տարբերություն ավանդական ձեռնարկությունների նպատակ ունեն ստեղծելու ձեռնարկատիրական այնպիսի մոդել, որը արդիական կլինի համաշխարհային շուկայում, և հնարավորություն կտա նրանց արագ զարգանալ ու իրենց ստեղծած արտադրանքով կամ ծառայությամբ արագորեն մտնել աշխարհի տարբեր շուկաներ:

Բացի այդ, սթարթափները շուկայում նոր աշխատատեղերի ստեղծման աղբյուր են, և նրանց հաջող զարգացման պարագայում նոր ստեղծվող աշխատատեղերի թիվը կարող է շատ ավելի արագ տեևմպերով աճել, քան ավանդական ձեռնարկությունների պարագայում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ սթարթափները նորովի են մոտենում առկա հիմնախնդիրներին ու նպատակ ունեն լուծել դրանք՝ ստեղծելով այնպիսի արտադրանք կամ ծառայություն, որը համաշխարհային շուկայում կարող է դեռևս գոյություն չունենալ՝ այդպես շատ արագ մեծացնելով իրենց արտադրանքի կամ ծառայության նկատմամբ պահանջարկը, ինչն էլ իր հերթին ենթադրում է նոր

աշխատատեղերի ստեղծում: Մինչդեռ ավանդական ձեռնարկությունները հիմնականում գործում են ձեռնարկատիրական այնպիսի մոդելով, որը հեշտ է կրկնօրինակել, ինչը նրանց կողմից շուկային առաջարկող արտադրանքը կամ ծառայությունը դարձնում է պակաս մրցունակ, որի հետևանքով նրանց զարգացումը կարող է դանդաղել:

Ի վերջո, քանի որ Հայաստանը փոքր ու բաց տնտեսություն ունեցող երկիր է, ուստի երկրի տնտեսությունը զարգացնելու և համաշխարհային շուկայում մրցունակ արտադրանք կամ ծառայություն ստեղծելու համար այն հիմնականում կարող է հույսը դնել իր քաղաքացիների նորարարական նախաձեռնությունների, գաղափարների ու դրանց կիրառման վրա: Այս համատեքստում կարևոր դեր են խաղում սթարթափները, որոնք նորարարությունների ներդրման աշխարհում ամենատարածված կառույցներն են: Այս համատեքստում Հայաստանը հաստատել է իր զգալի ներուժը՝ իր տարածքում ստեղծելու հաջողակ սթարթափներ, որոնք մրցունակ են համաշխարհային շուկայում: Այդ պատճառով Հայաստանի համար առանձնակի կարևորություն ունի սթարթափ էկոհամակարգի զարգացումը, որը դիտարկվում է որպես տնտեսության երկարաժամկետ զարգացման միջավայր:

Ուստի, սթարթափ էկոհամակարգի արդյունավետ զարգացումը Հայաստանի Հանրապետության համար դառնում է առաջնահերթություն՝ հատկապես տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մեծածավալ ներդրումների ներգրավման համատեքստում: Այս հանգամանքներով է պայմանավորված է թեմայի արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է բացահայտել ու կատարելագործել այն կառուցակարգերը, որոնք կօգնեն զարգացնել Հայաստանի սթարթափ էկոհամակարգը, որն է իր հերթին կիանդիսանա Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մեծածավալ ներդրումների ներգրավման միջոց: Այս նպատակը իրագործելու համար հետազոտությունում առաջադրվել ու լուծվել են հետևյալ խնդիրները.

1. սահմանել «սթարթափ» ու «սթարթափ էկոհամակարգ» հասկացությունները գիտա-գործնական տարրեր աղբյուրների հետազոտության միջոցով,
2. ուսումնասիրել սթարթափ էկոհամակարգում գործող տարրեր սուրյեկտների դերը ու նշանակությունը՝ օգտագործելով միջազգային փորձից ստացված տվյալները,
3. բացահայտել սթարթափների կողմից ներդրումների ներգրավման հիմնական աղբյուրները ու կառուցակարգերը,
4. վերլուծել սթարթափ էկոհամակարգի զարգացման միջազգային առաջավոր փորձը՝ ուսումնասիրելով գործողությունների այն համախումբը, որոնք նպաստել են այդ

զարգացմանը, և բացահայտել Հայաստանում ուսումնասիրված փորձի տեղայնացման հնարավորությունները,

5. Վերլուծել Հայաստանի սթարթափի Էկոհամակարգի վրա ազդող գործոնները և ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտը՝ առկա հնարավորություններն ու խոչընդոտները բացահայտելու համար,

6. գնահատել Հայաստանի սթարթափի Էկոհամակարգի արձանագրած արդյունքներն ու ցուցանիշները՝ դրա ուժեղ ու թույլ կողմերը հայտնաբերելու նպատակով,

7. գնահատել պետության կողմից իրականացվող սթարթափիների հիմնադրման ու սթարթափիներում ներդրումների խթանման քաղաքականությունների համեմատական ազդեցությունը սթարթափի Էկոհամակարգի վրա՝ առավել արդյունավետ քաղաքականությունը բացահայտելու համար, և դրա հիման վրա առաջարկել գործողություններ, որոնք Հայաստանի տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մեծաքանակ ներդրումների ներգրավման հիմք կհանդիսանան:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք զլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև՝ հավելվածներից: Ատենախոսությունը առանց հավելվածների բաղկացած է 168 էջից և ընդգրկում է 25 աղյուսակ, 14 գծապատկեր ու 4 հավելված:

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են հետազոտության գիտական արդյունքները և նորույթները, դրանց տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև դրանց փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության առաջին՝ «Սթարթափի Էկոհամակարգի ձևավորման տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացվել են «սթարթափ» և «սթարթափի Էկոհամակարգ» հասկացությունների վերաբերյալ առանձին հետինակների բնորոշումները, սթարթափիների տեսակները և կյանքի փուլերը, սթարթափի Էկոհամակարգի հիմնական սուբյեկտները:

Ատենախոսության երկրորդ՝ «Սթարթափի Էկոհամակարգի հիմնախնդիրների վերլուծությունը ՀՀ-ում» գլխում գնահատվել են ՀՀ սթարթափի Էկոհամակարգի վրա ազդող գործոնները, ինչպես նաև՝ իրականացվել է ՀՀ սթարթափի Էկոհամակարգի ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի և հիմնական ցուցանիշների վերլուծություն:

Ատենախոսության երրորդ՝ «Սթարթափ էկոհամակարգի կատարելագործման և ֆինանսավորման կառուցակարգերի ներդրման մոտեցումները <<-ում» գլխում մշակվել է Հայաստանի վենչուրային կապիտալի շուկայի մոդելը և պետության կողմից իրականացվող հնարավոր երկու քաղաքականությունների ազդեցությունը շուկայի ու սթարթափ էկոհամակարգի վրա: Այնուհետև իրականացվել է Հայաստանի սթարթափ էկոհամակարգի կատարելագործման և միջազգային առաջավոր փորձի տեղայնացման հնարավորությունների վերլուծությունը:

Հայաստանի սթարթափ էկոհամակարգի վերաբերյալ իրականացված հետազոտությունները հնարավորություն են տվել հանգամանալից ուսումնասիրել դրա գարզացվածության մակարդակը և առկա հիմնախնդիրները, ինչպես նաև՝ ուրվագծել դրա գարզացման հեռանկարները: Արդյունքում, ատենախոսության «Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում արվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

<<-ում վերջին մի քանի տարիներին առանձնակի ուշադրության են արժանանում սթարթափները, իսկ տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտը երկար տարիներ է, ինչ ճանաչված է որպես տնտեսության գարզացման գերակա ճյուղերից մեկը: Ուստի, հետազոտության շրջանակներում իրականացված վերլուծությունները, ինչպես նաև՝ գիտական արդյունքերն ու առաջարկությունները կարող են օգնել պետությանը սթարթափ էկոհամակարգի գարզացման արդյունավետ քաղաքականության մշակման ու կատարելագործման համար:

Մյուս կողմից, հետազոտության արդյունքները կարող են հետաքրքրել սթարթափ էկոհամակարգի մյուս սուբյեկտներին՝ սթարթափների հիմնադիրներին, սթարթափ արևելերատորներին ու ինկուբատորներին, վենչուրային կապիտալի ֆոնդերին, հրեշտակներդրողներին, ինչպես նաև՝ տվյալ թեմայով ուսումնասիրություն իրականացնող հետազոտողներին և այլ անձանց ու կազմակերպություններին:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Հետազոտության շրջանակներում բացահայտվել է Հայաստանի սթարթափ էկոհամակարգի գարզացվածության մակարդակը, դրա ուժեղ ու թույլ կողմերը, ինչպես նաև՝ առկա հնարավորություններն ու խոշընդոտները: Բացի այդ, վենչուրային կապիտալի շուկայի մոդելի հիման վրա մշակվել է Հայաստանի սթարթափ էկոհամակարգի արդյունավետ գարզացման քաղաքականությունը: Արդյունքում, իրականացված

Վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և կիրառական բովանդակության գիտական արդյունքներ, որոնցից գիտական նորույթ հանդիսացողները ներկայացված են ստորև.

1. Հայաստանի սթարթափի էկոհամակարգի ոլորտը կանոնակարգող օրենսդրական դաշտի համայիր վերլուծության հիման վրա բացահայտվել են ոլորտի զարգացման հնարավորություններն ու խոչընդոտները՝ ներկայացնելով օրենսդրական բարեփոխումների առաջարկությունները հայկական սթարթափիների կողմից տեղական ու արտասահմանյան ներդրումների ներգրավման համար:

2. Գնահատվել են Հայաստանի սթարթափի էկոհամակարգի տարրեր դերակատարների արձանագրած արդյունքներն ու ցուցանիշները, որի հիման վրա բացահայտվել են էկոհամակարգի ուժեղ ու թույլ կողմերը՝ նախանշելով ուժեղ կողմերի ամրապնդման և թույլ կողմերի չեզոքացման մոտեցումները:

3. Մշակվել է Հայաստանի վենչուրային կապիտալի շուկայի մոդելի վրա սթարթափիների ստեղծման (վենչուրային կապիտալի պահանջարկի) ու սթարթափիներում ներդրումների (վենչուրային կապիտալի առաջարկի) խթանման քաղաքականությունների ազդեցությունը, որի արդյունքում հիմնավորվել է Հայաստանի սթարթափի էկոհամակարգի երկարաժամկետ զարգացման համար առավել օպտիմալ քաղաքականությունը, և արվել են էկոհամակարգի զարգացմանն ուղղված գործնական առաջարկություններ:

4. Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրության հիման վրա վերլուծվել են տարրեր երկրների սթարթափի էկոհամակարգերի զարգացման առաջընթացն ապահոված գործողությունները՝ առաջարկելով դրանց տեղայնացման մոտեցումները Հայաստանի սթարթափի էկոհամակարգի զարգացման գործողությունների փաթեթի համատեքստում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Այնուամենայնիվ, ատենախոսությունում առկա են որոշակի թերություններ և բացթողումներ.

1. Էջ 20-ում հեղինակը համադրել է երեք սահմանումներ և առաջարկել իր սահմանումը՝ կապված «սթարթափ» տերմինի հետ, որտեղ նշվում է դրանց գործունեությունը ծայրահեղ անորոշության պայմաններում: Սակայն ցանկալի կլիններ որպեսզի պարզապես նշվեր անորոշության պայմաններում, այլապես ապարդյուն է ստացվում սթարթափ գործունեությունը:

2. 1.3 ենթագլխում հեղինակը ներկայացնում է մի շարք երկրների փորձը «սթարթափ էկոհամակարգ»-ի զարգացման համատեքստում, սակայն չի նշում, թե ինչ չափանիշով են ընտրված այդ երկրները: Կարելի է ենթադրել, որ ընտրված են փոքր երկրները

տարրեր տարածաշրջաններից, սակայն ցանկալի կլիներ նշել ուսումնասիրված երկրների ընտրության չափորոշիչները:

3. Ատենախոսության 3.1 «ՀՀ սթարթափ էկոհամակարգի ֆինանսավորման և ՏՀՏ ոլորտում ներդրումների ներգրավման հիմնախնդիրների լուծման ուղղությունները և մոտեցումները» ենթագլխում քննարկվել են ուսումնասիրության թեմային առնչվող կարևորագույն հիմնահարցերը: Սակայն, կարծում ենք, այս բաժինը պետք է ունենար առավելապես կիրառական-գործնական ուղղվածություն: Մասնավորապես, իմաստ ուներ ատենախոսության այս բաժնում կատարված մշակումները «առարկայացնել» և «նյութին կենդանի բնույթ հաղորդել» ինչպես առանձին որևէ ոլորտի կամ այդ ոլորտների առանձին կազմակերպության (կամ կազմակերպությունների) օրինակով: Նույնիսկ կատարված մշակումները և մեթոդաբանական առաջարկությունները կարելի եր մեկնաբանել պայմանական օրինակով:

4. Էջ 133-ում հեղինակը նշում է. «... առաջարկում է, որ պետությունը ավելացնի վենչուրային կապիտալի շուկայի առաջարկի ծավալները՝ դրա համար ստեղծելով վենչուրային կապիտալի իր ֆոնդը: Եվ ենելով «Յոզմա» ծրագրի շրջանակներում հսրայելի ունեցած հաջող փորձից՝ առաջարկում է, որ պետության կողմից ստեղծված վենչուրային կապիտալի ֆոնդը կյանքի վաղ փուլում գտնվող հայկական սթարթափներում ներդրումներն իրականացնի այդ օրինակի հիման վրա:»: Ցանկալի է, որպեսզի ատենախոսը ավելի կոնկրետացներ նշված ֆոնդի չափերի վերաբերյալ իր պատկերացումները, դրանց ձևավորման աղյուրները, ինչպես նաև, հնարավորության դեպքում, նշվեին այն առաջնահերթ ոլորտները, որոնք խրախուսվելու և աջակցվելու են առաջարկվող վենչուրային ֆոնդի միջոցների հաշվին:

Եզրակացություն

Նշված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա, ուստի Վահե Լևոնի Թումանյանի «Հայաստանի «սթարթափ էկոհամակարգ»-ի զարգացումը՝ որպես տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում ներդրումների ներգրավման միջոց» թեմայով ատենախոտությունը իրենից ներկայացնում է որպես ամբողջական, ավարտուն և օգտակար հետազոտություն, որտեղ դրված են Հայաստանի «սթարթափ էկոհամակարգ»-ի զարգացման կառուցակարգերի վերաբերյալ գործնական կարևորություն ունեցող խնդիրներ, ներկայացված են այդ խնդիրների լուծմանը ուղղված գործնական առաջարկություններ, որոնք կնպաստեն տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում մեծաբանակ ներդրումների ներգրավմանը: Վերլուծության արդյունքում առաջադրված են գիտական նորույթ պարունակող մոտեցումներ:

Ներկայացված սեղմագիրը կազմված է <<ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները։ Ատենախոսության հիմնական դրույթները հրապարակված են հեղինակի գիտական աշխատություններում։

Այսպիսով, Վահե Լևոնի Թումանյանի «Հայաստանի «սթարթափ Էկոհամակարգ»-ի զարգացումը՝ որպես տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում ներդրումների ներգրավման միջոց» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «<<-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև՝ <<ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածու հայցվող գիտական աստիճանի շնորհմանը։

**Պաշտոնական ընդիմախոս՝
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր**

Ա. Խ. Մարկոսյան

**Դրոֆ. Ա. Խ. Մարկոսյանի ստորագրություն
իսկությունը հաստատում եմ՝
ԵՊՀ-ի գիտական քարտուղար, Ռ.Գ.Բ.**



Ա.ՎՀովհաննիսյան